

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ՔԻԳՈ ԷՅ ԷՄ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01338888, Գրանցման համար՝ 271.110.1322542, Հասցե՝ ք. Երևան, Շիրազի փ 48, բն 31) կողմից՝ ստորև բերված հիմքերով իրականացվող ծառայությունների մատուցման Պայմանագրի կնքման հրապարակային առաջարկ: Ըստ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 453 հոդվածի՝ ծառայությունների մատուցման մասին սույն Պայմանագրի տեքստը հանդիսանում է հրապարակային օֆերտա, որը կնքվում է սույն պայմանագրի կնքման առաջարկի ընդունման միջոցով և չի պարտադրում երկկողմանի ստորագրում ու վավեր է էլեկտրոնային եղանակով:

## 1. Տերմինները

1.1. KEYGO ծառայության մատուցման մասին սույն Հրապարակային օֆերտայում ներքոնշյալ տերմինները կիրառվում են հետևյալ նշանակություններով

1.1.1. **Հարթակ/Կայք**- ընդգրկում է հասցեով վեբ կայքում ներբեռնած բոլոր էջերը <https://keygo.io/>

1.1.2. **Հյուր** – իրավասու և աշխատունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, որն օգտագործում է Հարթակը Կացության վայրի փնտրտուքի և ամրագրման, ինչպես նաև և Կեցության վայրում ծառայությունների մատուցումից օգտվելու համար:

1.1.3. **Կեցության վայր** – բնակարան, որի միջոցով Կեցության վարի ապահովման ծառայությունների տրամադրելու իրավասություն ունի այդ գույքի սեփականատերը, սեփականատիրոջ լիազորված անձը կամ որևէ այլ կերպ այդպիսի լիազորություն ունեցող անձը և որի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրված է Հարթակում, և որը հանդիսանում է կեցության ապահովման ծառայությունների առարկա:

1.1.4. **Իրավատեր**– իրավաբանական կամ գործունակ ֆիզիկական անձ, ով հանդիսանում է կեցության ապահովման ծառայությունների առարկա հանդիսացող կեցության վայրի սեփականատեր կամ ունի Կեցության վայրի օգտագործման և տիրապետման իրավունք և ում հաշվին մատուցվում է կեցության վայրի ապահովման ծառայություններ՝ Հարթակի միջոցով:

1.1.5. **Ամրագրում** – Հյուրի կողմից իրականացվող գործառույթ, որն ուղղված է Կեցության վայրի տրամադրման ծառայություններ պայմանագրի կնքմանը՝ Հարթակում համապատասխան հայտի միջոցով:

1.1.6. **Պայմանագիր/ Օֆերտա**- KEYGO-ի կողմից Կայքի միջոցով Կեցության վայրի ապահովման ծառայություններ մատուցելու հնարավորության ընձեռման ծառայությունների մասին <https://eye.keygo.io/offer.pdf> հասցեով Ինտերնետ ցանցում տեղակայված սույն փաստաթուղթը:

1.1.7. **KEYGO** – «ՔԻԳՈ ԷՅ ԷՄ» ՍՊԸ

## 2. Պայմանագրի առարկան

2.1. Պայմանագիրը հանդիսանում է գործակալական պայմանագր, որտեղ KEYGO-ն հանդիսանում է Իրավատիրոջ գործակալը և հանդես է գալիս վերջինիս հանձնարարությամբ, վերջինիս հաշվին և անունից:

2.2. KEYGO ծառայությունները ներառում են

2.2.1. Հարթակում Կեցության վայրի հետ կապված տեղեկատվության տեղադրում,

- 2.2.2. Ամրագրումն անմիջապես Հարթակում ձևակերպելու հնարավորություն տվող գործառույթների տրամադրում,
- 2.2.3. Իրավատիրոջ հաշվին մատուցվող ծառայության առաջխաղացում,
- 2.2.4. Իրավատիրոջ անունից և հաշվին Իրավատիրոջը սեփականության իրավունքով պատկանող ոչ կանխիկ դրամական միջոցների ընդունման իրականացում:

### **3. Ծառայությունների մատուցման պայմանները**

- 3.1. KEYGO-ն անցնում է Ծառայությունների մատուցմանը Պայմանագրի կնքումից հետո: Պայմանագիրը համարվում է կնքված Իրավատիրոջ կողմից Օֆերտայի՝ վերջինիս մեջ տեղ գտած պայմաններով, ընդունման պահից սկսած:
- 3.2. Օֆերտան Իրավատիրոջ կողմից համարվում է ընդունված KEYGO-ի հետ անշարժ գույքը վարձակալության հանձնելուն աջակցության ծառայությունների մատուցման մասին առանձին պայմանագիր կնքելով կամ KEYGO-ի հետ այլ այնպիսի պայմանագիր կնքելով, որում հղում է կատարվում սույն Պայմանագրին և համարվում է այդ պայմանագր(եր)ի անբաժանելի մասը:

3.3. Ընդունելով Օֆերտայի պայմանները՝ Իրավատերը նաև ընդունում է հետևյալ պայմանները՝

- <https://eye.keygo.io/policy.pdf> հասցեով Ինտերնետ ցանցում տեղակայված անձնական տվյալների մշակման համաձայնություն,
- <https://eye.keygo.io/cookie.pdf> հասցեով Ինտերնետ ցանցում տեղակայված cookies թղթապանակների նկատմամբ քաղաքականություն,

### **4. Ծառայությունների արժեքը և հաշվարկի կարգը**

4.1. Ծառայությունների արժեքը (գործակալական վճարը), հաշվվում է Իրավատիրոջ հաշվին մատուցվող ծառայության գնից և **կազմում է դրա 13 տոկոսը:**

4.2. KEYGO Ծառայությունների վճարումը (գործակալական վճարը) իրականացվում է Հյուրի կողմից KEYGO-ին փոխանցված Իրավատիրոջը սեփականության իրավունքով պատկանող դրամային միջոցներից համապատասխան գումարի պահումով:

4.3. Իրավատիրոջը փոխանցման ենթակա դրամական միջոցների (դրանցից հանելով KEYGO ծառայության դիմաց ստացվող գործակալական վճարները), փոխանցման կարգը սահմանվում է սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված՝ անշարժ գույքը վարձակալության հանձնելուն աջակցության ծառայությունների մատուցման մասին առանձին պայմանագրով և/կամ KEYGO-ի և Իրավատիրոջ (այսուհետ նաև Կողմեր) միջև գործող այլ պայմանագրով:

4.4. Պայմանագրի շրջանակներում KEYGO-ն յուրաքանչյուր հաշվետվու շրջանի ավարտից սկսած 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Հաշվետու շրջան համարվում է օրացուցային ամիսը) պատրաստում է և փոխանցում է Իրավատիրոջը վերջինիս անունից, հանձնարարությամբ և վերջինիս հաշվին կատարված Հանձնարարականների մասին Հաշվետվություն (հետայսու՝ Հաշվետվության փաստաթղթեր)

4.5. Հաշվետվության փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները ուղարկվում են

Իրավատերերին էլեկտրոնային փոստով, որը նշված է անշարժ գույքը վարձակալության հանձնելուն աջակցության ծառայությունների մատուցման մասին և/կամ Կողմերի միջև գործող այլ առանձին պայմանագրում: Հաշվետվության փաստաթղթերի բնօրինակները տրամադրվում են Իրավատիրոջը՝ ըստ նրանց պահանջի, վերջիններիս կողմից նշված փոստային հասցեներով:

4.6. Հաշվետվության փաստաթղթերի ստացման պահից (էլեկտրոնային եղանակով կամ բնօրինակների տեսքով՝ կախված ավելի վաղ պատահածից) 5 (Հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Իրավատերն իրավասու է ուղղել KEYGO -ին հիմնավոր առարկություն Հաշվետվության փաստաթղթերում նշված տվյալների վերաբերյալ: Եթե սահմանված ժամկետում չստացվեն հիմնավորված առարկություններ, ապա KEYGO Ծառայությունները համարվում են ընդունված լիարժեք ծավալով:

4.7. Կողմերը ընդունում են, որ հաշիվ ապրանքագրերի և հաշիվների ներկայացման ժամանակ «Կատարող» տվյալի անվանումը հավասարագոր է «Գործակալ» անվանումներին, իսկ «Պատվիրատու» անվանումը հավասարագոր է «Իրավատեր», «Պրինցիպալ» անվանումներին:

## **5. Պատասխանատվություն**

5.1. Հյուրի հետ Կեցության վայրի ապահովման ծառայությունների մատուցման մասին հարթակի միջոցով պայմանագրի կնքումից հետո, այդպիսի ծառայությունների մատուցման՝ Իրավատիրոջ մեղքով ծագած անհնարիության դեպքում՝ Իրավատերը KEYGO-ին վճարում է տուգանք՝ չափով:

## **6. Երաշխիքներ**

6.1. KEYGO -ի կողմից կգործադրեն բոլոր ջանքերը՝ Կայքի հետ կապված ցանկացած խոտան ու սխալ հարթելու համար: Մյուս կողմից, KEYGO-ն չի երաշխավորում սխալների ու խոտանների բացառում՝ Պայմանագրի 2.2 կետով նախատեսված Ծառայությունները մատուցելու ընթացքում:

6.2. Պայմանագրի տեքստում ուղղակի նշված երաշխիքներից բացի KEYGO-ն չի տրամադրում որևէ այլ ուղիղ կամ անուղղակի երաշխիք Պայմանագրի շրջանակներում և հրաժարվում է նշվածից դուրս հանձն առել Իրավատիրոջ իրավունքների ոտնահարման որևէ դեպքի դիմաց երաշխիքի կատարում:

6.3. Իրավատերը երաշխավորում ու հաստատում է, որ ունի Կեցության վայրի ապահովման ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր իրավասությունները

## **7. Վեճերի լուծումը**

7.1. Պայմանագիրը, դրա կնքումը և կատարումը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ: Բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվում Պայմանագրով/Օֆերտայով կամ կարգավորվում են ոչ լիարժեք, դիտարկվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի շրջանակներում:

7.2. Կողմերը պետք է ձգտեն հարթել առաջացած խնդիրները բանակցությունների միջոցով: Կողմերի համար պարտադիր է առաջացած բոլոր վեճերի, տարաձայնությունների ու/կամ պահանջների դիտարկումը գրավոր առարկությունների տեսքով: Առարկությունների դիտարկման ժամկետը սահմանվում է դրանց ստացումից հետո 10 (Տասը) օր: Օֆերտայի/Պայմանագրի Բաժին 8-ում ամրագրված ծանուցումների ուղղորդման պահանջներին հետևելն՝ առարկություններ ուղարկելիս հանդիսանում է

վեճերի հարթման համար անհրաժեշտ պայման: Առարկությունը համարվում է հասցված, նաև այն դեպքում, երբ դրա ստացմանը խանգարում են շինծու անբարեխիղճ խոչընդոտներ և/կամ Կողմը խուսափում է այն ստանալուց, ինչպես նաև, երբ Կողմը արգելափակում է մյուս Կողմի էլեկտրոնային հաղորդագրությունները:

7.3. Վեճերը, տարաձայնությունները և/կամ պահանջները, որոնք չեն լուծվում բանակցությունների միջոցով, ենթակա են լուծման՝ Հայաստանի հանրապետությունում գործող վեճին ընդդաստյա դատարանում:

## **8. Տեղեկատվության փոխանակումը և ծանուցումները**

8.1. Բոլոր դիմումները, ծանուցագրերը, պահանջները և/կամ իրավաբանական նշանակության այլ հաղորդագրությունները, որոնք պահանջվում կամ ուղղվում են Պայմանագրի շրջանակներում, կարող են ուղարկվել պատվիրված նամակներով, առաքման ծառայությամբ, էլեկտրոնային հաղորդագրությամբ՝ ստացող Կողմի էլեկտրոնային հասցեին:

8.2. Կողմերի հավաստում են, որ իրենց ծանուցման հասցեները նշված են Կողմերի միջև գործող անշարժ գույքը վարձակալության հանձնելուն աջակցության ծառայությունների մատուցման մասին առանձին պայմանագրով և/կամ Կողմերի միջև գործող այլ պայմանագրով և դրանցում որևէ տվյալի փոփոխության դեպքում պարտավորվում են այդ մասին նախապես՝ ողջամիտ ժամկետում, գրավոր տեղեկացնել մյուս Կողմին:

8.3. Կողմի պատշաճ ծանուցման պահ է համարվում,

- Առաքման օրը, եթե ուղարկվել են փոստով կամ առաքման ծառայությամբ,
- Ուղարկման օրը, եթե դա կատարվել է էլեկտրոնային փոստով:

8.4. Իրավաբանական նշանակության հաղորդագրությունները, որոնք ուղարկվել են էլեկտրոնային փոստով ունեն իրավաբանական լիարժեք ուժ և կարող են կիրառվել դատարանում որպես ապացույց հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

- Իրավաբանական նշանակության ցանկացած հաղորդագրություն՝ ուղղված Պայմանագրի պայմանների փոփոխությանը, Պայմանագրի մասնակի կամ ամբողջական դադարեցմանը, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդագրության միջոցով փոխանցվող առարկությունները, պահանջներն ու դիմումները, պետք է
  - (1) պարտադիր կարգով պարունակեն պատճառ կերպով ձևակերպված վերաբերելի մտքեր և ստորագրված լինեն իրավասու անձանց կողմից
  - (2) էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում ուղղվեն ստացող Կողմի՝ 4.4. Կետով սահմանված համապատասխան էլեկտրոնային հասցեին:

## **9. Պայմանագրի կնքումն ու լուծումը**

9.1 Պայմանագիրը մտնում է ուժի մեջ Օֆերտայի՝ իրավաստիրոջ կողմից ընդունման պահից և գործում է մինչև դրա լուծումը:

9.2 Կողմերի համաձայնությամբ Պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած պահի:

9.3 Կողմերի միջև կնքված անշարժ գույքը վարձակալության հանձնելուն աջակցության ծառայությունների մատուցման մասին առանձին պայմանագիր և/կամ

այլ գործող պայմանագրի լուծման դեպքում սույն Պայմանագիրը ինքնաբերաբար համարվում է լուծված:

9.4 Ըստ Պայմանագրի՝ Կողմերի պարտականությունները, որոնք իրենց բնույթից ելնելով պետք է շարունակեն գործել (ներառյալ գաղտնիությանը վերաբերող պարտականությունները, փոխհաշվարկի, տեղեկատվության օգտագործման պարտականություններ և այլն), մնում են ուժի մեջ Պայմանագրի դադարեցումից հետո:

9.5 Պայմանագրի դադարեցումը հիմք չէ Կողմերին Պայմանագրի գործելու ընթացքում դրա պայմանների խախտման դեպքում պատասխանատվությունից ազատելու համար: